ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
13 սեպտեմբերի 2024 թվական, N 103-Ա

«ՕՁՈՒՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Լուծարել «Օձունի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու՝ 2013 թվականի հունիսի 26-ի՝ «Օձունի մշակույթի տուն» Համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասին» թիվ 23-Ա որոշումը:
3. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով
   - 3.1 Հարություն Ձավարյան - Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ
   - 3.2 Դավիթ Սարգսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
   - 3.3 Արմինե Երիցյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
   - 3.4 Տիգրան Սարգսյան - «Օձունի գրադարանային համակարգ» ՀՈԱԿ-ի տնտեսվար, հանձնաժողովի անդամ
   - 3.5 Հայկուշ Պետրոսյան - «Օձունի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի գրադարանավար, հանձնաժողովի անդամ
   - 3.6 Ամրաստան Ջանինյան - Օձուն վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
   - 3.7 Ռոմիկ Վարդանյան - Արևաձագ վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
   - 3.8 Ալլա Թարմինյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
   - 3.9 Հեղինե Ճիճիլյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ
   - 3.10 Սամվել Թորոսյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի

պետի պաշտոնակատար

3.11 Նարինե Թորոսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

4. Լուծարային հանձնաժողովին՝ 2-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
16.	ՏԻԳՐԱՆ	ՊԱՊՈՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., սեպտեմբերի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի